# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔ

---

24 Դեկտեմբերի 2019 թ. Թիվ 204

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ի կատարումն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի չորրորդ մասի՝ Ձեզ է ուղարկվում Արևիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 33- Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> N35-Ն որոշումը:

Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր 42 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Ծատուրյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Ա-23344-2019
26 12 2019

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևիկ համայնք, 22 փողոց, 4-րդ շենք, 098-82-44-44
arevik.armavir@mta.gov.am

« 23» Դեկտեմբերի 2019 թվական N 35 -Ն

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 33 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, ինչպես նաև « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 33-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները .

1) Վարչական բյուջեի եկամտային մասում՝
   -1112 տողը (Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար ) պակասեցնել 800.0 հազար դրամով,
   -1261 տողը(Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)) ավելացնել 5060.0 հազար դրամով,
   -1361 տողը (Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ) ավելացնել 160.0 հազար դրամով,
   -13503 տողը (Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար) ավելացնել 440.0 հազար դրամով,
   -13514 տողը (Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար )ավելացնել 200.0 հազար դրամով,
   -1111 տողը(Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար) ավելացնել 200.0 հազար դրամով,

1) Վարչական բյուջեի ծախսային մասում՝
   -01 բաժնի 01 խումբ 1 դասի 4212 հոդվածից պակասեցնել 1700.0 հազար դրամով,
   - 01 բաժնի 01 խումբ 1 դասի 4252 հոդվածից պակասեցնել 200.0 հազար դրամով,
   - 01 բաժնի 01 խումբ 1 դասի 4233 հոդվածը ավելացնել 40.0 հազար դրամով,
   -01 բաժնի 01 խումբ 1 դասի 4112 հոդվածը ավելացնել 1300.0 հազար դրամով,
   - 09 բաժնի 05 խումբ 1 դասի 4511 հոդվածը ավելացնել 760.0 հազար դրամով,
   - 06 բաժնի 03 խումբ 1 դասի 5113 հոդվածը ավելացնել 5060.0 հազար դրամով,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

| *Ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* |
| --- | --- | --- |
| 1. Բեգլարյան Զիվան | ------------ | ------------ |
| 2.Ղարիբյան Ղուկաս | ------------ | ------------ |
| 3. Գրիգորյան Գագիկ | ------------ | ------------ |
| 4. Ալոյան Ալի | ------------ | ------------ |
| 5. Սիմոնյան Սարգիս | ------------ | ------------ |
| 6.Արմենակյան Շավարշ | ------------ | ------------ |
| 7. Ստեփանյան Վարդուհի | ------------ | ------------ |
| 8. Բաղդասարյան Կարինե | ------------ | ------------ |

Համայնքի ղեկավար՝ Գ. Ծատուրյան

2019 թվական դեկտեմբերի 23

Գ.Արևիկ

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ << 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 33 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ N 35-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2019 թվականի դեկտեմբերի 23-ի << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11 -ի N33-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին >> N 35 -Ն որոշման ընդունումը պայմանվորված է << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն ՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների , բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա: Քանի որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի

2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 33-Ն որոշումը կրում է նորմատիվ իրավական բնույթ, ապա Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

Համայնքի ղեկավար Գ. Ծատուրյան

23-ը դեկտեմբերի 2019 թվական

Գ.Արևիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**


0010 Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
Էլ. փոստ՝ press@moj.am


17/27.3/29628-19
18 12 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԳԱՌՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ծատուրյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 193 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**


Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
հեռ. 594116

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի վերնագիրն անհրաժեշտ է խմբագրել և վերաշարադրել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, մասնավորապես անհրաժեշտ է նշել փոփոխվող իրավական ակտի կրճատ անվանումը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու ,Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի ,Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասինե թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> որոշման նախագծի փորձագիտական եզրակացության

| N | ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱԴՐԱԾ ՄԱՐՄՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ |
|---|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | ,Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի ,Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասինե թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> որոշման նախագծի վերնագիրն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ մասնավորապես անհրաժեշտ է նշել փոփոխվող իրավական ակտի կրճատ անվանումը: | Հիմք ընդունելով »Նորմատիվ իրավական ակտերի մասին« Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ կատարվել է համապատասխան ուղղում . |
| | | | |

*Արևիկ համայնքի ղեկավար*՝ *Գ. Սատուրյան*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
(մարզի անվանումը)

ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
(քաղաքային,գյուղական,քաղային համայնքի անվանումը)

# 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
(քաղաքային,գյուղական,քաղային համայնքի անվանումը)

ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11 -Ի N 33 -Ն ՈՐՈՇՄԱՄԲ
(ամիս ամսաթիվ)

ԱՐՄԱՎԻՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
(համայնքի բյուջեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Գ. Ի. ԾԱՏՈՒՐՅԱՆ
(անուն, հայրանուն, ազգանուն)